



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄ**

**«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱԶԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ**

«10» դեկտեմբերի 2015թ.

Հաստատում եմ՝

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

պետ *Ս. Բախչյան* Անանյան

ՍՑ-ԳԲԽ-28/15 բողոքը քննող

հանձնաժողովին

Ե Զ Ր Ա Կ Ա Ց ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով և ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 24.06.2015թ. թիվ 1/73-1/16391-15 գրությամբ ներկայացված «Սապենո» Տպագրատուն (ՀՎՀՀ՝ 06948558) և «Վա-Հա» ՍՊ ընկերություններին (ՀՎՀՀ՝ 00813815) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հարցը, պարզել ենք հետևյալը.

1. ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը

ՀՀ ֆինանսների նախարարությունը 24.06.2015թ. թիվ 1/73-1/16391-15 գրությամբ դիմել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին (այսուհետ նաև՝ Կենտրոն)՝

խնդրելով ուսումնասիրել «Սապենո» Տպագրատուն և «Վա-Հա» ՍՊ ընկերություններին (այսուհետ նաև՝ Ընկերություններ) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը և այդպիսի հիմքերի առկայության դեպքում ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ Ընկերությաններին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ նաև՝ Ցուցակ) ներառելու համար:

ՀՀ ֆինանսների նախարարությունը Կենտրոնին ուղղված 19.10.2015թ. թիվ 1.2/73-131013-15 գրությամբ ներկայացրել է ՀՀ ֆինանսների նախարարության Նոր Նորքի հարկային տեսչության 15.10.2015թ. թիվ 30-2/[950991]-15 և ՀՀ ֆինանսների նախարարության Վանաձորի տարածքային հարկային տեսչության 14.10.2015թ. թիվ 65-4/[950421]-15՝ համապատասխանաբար «Վա-Հա» և «Սապենո» Տպագրատուն ՍՊ ընկերությունների ժամկետանց հարկային պարտավորություններ ունենալու մասին տեղեկանքների պատճենները:

Այսուհետև, ՀՀ ֆինանսների նախարարությունը 11.12.2015թ. թիվ 1/73-1/39653-15 գրությամբ ներկայացրել է ՀՀ ֆինանսների նախարարության Նոր Նորքի հարկային տեսչության 08.12.2015թ. թիվ 30-2/[995147]-15 գրությունը, համաձայն որի՝ «Վա-Հա» ՍՊԸ-ն 14.05.2015թ. դրությամբ չունի ժամկետանց հարկային պարտավորություն, միաժամանակ տեղեկացնելով, որ վերջինիս կողմից 25.11.2015թ. էլեկտրոնային եղանակով հարկային մարմին է ուղարկվել 2015թ. առաջին եռամսյակի շրջանառության հարկի և 2015թ. հունվար ամսվա եկամտային հարկի ճշտված հաշվարկներ, ինչի արդյունքում կատարվել է «Վա-Հա» ՍՊԸ-ի հարկային պարտավորությունների վերահաշվարկ:

2. «Սապենո» տպագրատուն և «Վա-Հա» ՍՊ ընկերությունների ներկայացրած փաստաթղթերը և դիրքորոշումը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը 24.07.2015թ. թիվ 01.04.1/1891-15 գրությամբ կարծիք ստանալու նպատակով դիմել է «Սապենո» Տպագրատուն ՍՊԸ-ին, սակայն վերջինս նշված գրությանը չի պատասխանել:

Կենտրոնի 15.07.2015թ. թիվ 01/04.1/1623-15 գրությանն ի պատասխան՝ 27.07.2015թ. գրությամբ «Վա-Հա» ՍՊԸ-ն հայտնել է, որ 3728 ՀՀ դրամի հարկային

պարտավորությունները թյուրիմացության արդյունք են, և տեղեկանալուց հետո ընկերությունն այն անմիջապես վճարել է:

«Սապենո» Տպագրատուն ՍՊԸ-ն ՍՑ-ԳԲԽ-28/15 բողոքը քննող հանձնաժողովի 30.11.2015թ. ժամը 16:15-ին նիստի վերաբերյալ պատշաճ ծանուցված է եղել, սակայն չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը նշված նիստին:

«Վա-Հա» ՍՊԸ-ն ՍՑ-ԳԲԽ-28/15 բողոքը քննող հանձնաժողովի 30.11.2015թ. ժամը 16:15-ին տեղի ունեցած նիստին ներկայացրել է ՀՀ ֆինանսների նախարարության Նոր Նորքի հարկային տեսչության 27.11.2015թ. թիվ 3902 և թիվ 3901՝ «Վա-Հա» ՍՊԸ-ի կողմից 14.05.2015թ. և 15.05.2015թ. դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունենալու վերաբերյալ տեղեկանքները:

3. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի ներկայացրած փաստաթղթերը և դիրքորոշումը

«Երևանի պետական համալսարան» հիմնադրամը (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 06.08.15թ. թիվ 02/670 գրությամբ Կենտրոնին հայտնել է, որ «Սապենո» Տպագրատուն ՍՊԸ-ն, մասնակցելով «ԵՊՀ-ՇՀԱՇՁԲ-15/61» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին (այսուհետ նաև՝ Ընթացակարգ) 7-րդ, 8-րդ, 9-րդ, 10-րդ, 12-րդ, 13-րդ, 14-րդ, 15-րդ և 16-րդ չափաբաժինների մասով ճանաչվել է որպես ընտրված մասնակից և պատշաճ կատարում է պայմանագրային պարտավորությունները:

«Երևանի պետական համալսարան» հիմնադրամը 22.07.2015թ. թիվ 01/637 գրությամբ Կենտրոնին հայտնել է, որ «Վա-Հա» ՍՊԸ-ի հետ «ԵՊՀ-ՇՀԱՇՁԲ-15/61» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի շրջանակներում պայմանագիր չի կնքվել, քանի որ վերջինս Ընթացակարգի տարբեր չափաբաժիններով ճանաչվել է որպես 2-րդ տեղը զբաղեցած մասնակից:

Միևնույն ժամանակ Պատվիրատուն հայտնել է, որ նախկինում կնքված պայմանագրերով ստանձնած պարտավորությունները «Վա-Հա» ՍՊԸ-ի կողմից բարեխղճորեն կատարվել են:

Վերոհիշյալ գրություններին կից՝ Պատվիրատուն ներկայացրել է 21.05.2015թ. ՀՀ ֆինանսների նախարարություն կատարած հարցումը, որտեղ Ընկերությունների

հայտերի ներկայացման օր է նշվել **15.05.2015թ.**, ինչպես նաև Ընթացակարգի գրանցամատյանից քաղվածք, որտեղ Ընկերությունների հայտերը ներկայացնելու օր է նշվել **14.05.2015թ.**:

4. ՍՑ-ԳԲԽ-28/15 պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ՀՀ ֆինանսների նախարարության 24.06.2015թ. թիվ 1/73-1/16391-15 գրությամբ ներկայացված «Սապենո» Տպագրատուն և «Վա-Հա» ՍՊ ընկերություններին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կողմից կազմակերպվել է «ԵՊՀ-ՇՀԱՇՁԲ-15/61» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգը, որին մասնակցելու նպատակով հայտ են ներկայացրել «Սապենո» Տպագրատուն և «Վա-Հա» ՍՊ ընկերությունները:

2. Ընկերությունները հայտի N 2 հավելվածով՝ Ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իրենց տվյալների համապատասխանության մասին հայտարարությամբ հայտնել և հավաստել են, որ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ (**14.05.2015թ.**) չունեն ժամկետանց հարկային պարտավորություններ Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:

3. Ի պատասխան Կենտրոնի 09.10.2015թ. թիվ 01/04.1/2704-15 գրության՝ ՀՀ ֆինանսների նախարարությունը Կենտրոնին ուղղված 19.10.2015թ. թիվ 1.2/73-131013-15 գրությամբ ներկայացրել է ՀՀ ֆինանսների նախարարության Նոր Նորքի հարկային տեսչության 15.10.2015թ. թիվ 30-2/[950991]-15 և ՀՀ ֆինանսների նախարարության Վանաձորի տարածքային հարկային տեսչության 14.10.2015թ. թիվ 65-4/[950421]-15՝ համապատասխանաբար «Վա-Հա» և «Սապենո» Տպագրատուն ՍՊ ընկերությունների ժամկետանց հարկային պարտավորություններ ունենալու մասին տեղեկանքների պատճենները:

4. Ի պատասխան Կենտրոնի 07.12.2015թ. թիվ 01/04.1/[2910]-15 գրության՝ ՀՀ ֆինանսների նախարարությունը 11.12.2015թ. թիվ 1/73-1/39653-15 գրությամբ ներկայացրել է ՀՀ ֆինանսների նախարարության Նոր Նորքի հարկային տեսչության 08.12.2015թ. թիվ 30-2/[995147]-15 գրությունը, համաձայն որի՝ «Վա-Հա» ՍՊԸ-ն **14.05.2015թ. դրությամբ չունի ժամկետանց հարկային պարտավորություն՝** միաժամանակ տեղեկացնելով, որ վերջինիս կողմից 25.11.2015թ. էլեկտրոնային եղանակով հարկային մարմին է ուղարկվել 2015թ. առաջին եռամսյակի շրջանառության հարկի և 2015թ. հունվար ամսվա եկամտային հարկի ճշտված հաշվարկներ, ինչի արդյունքում կատարվել է «Վա-Հա» ՍՊԸ-ի հարկային պարտավորությունների վերահաշվարկ:

5. ՍՑ-ԳԲԽ-28/15 պաշտոնական ընթացակարգի բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 24.06.2015թ. թիվ 1/73-1/16391-15 և 19.10.2015թ. թիվ 1.2/73-1/31013-15 գրությունները, ինչպես նաև ՀՀ ֆինանսների նախարարության Նոր Նորքի հարկային տեսչության 15.10.2015թ. թիվ 30-2/[950991]-15 և ՀՀ ֆինանսների նախարարության Վանաձորի տարածքային հարկային տեսչության 14.10.2015թ. թիվ 65-4/[950421]-15 գրությունները, հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն անձինք, որոնք ունեն ժամկետանց պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում գնման գործընթացի շրջանակում ներկայացրել է կեղծ տվյալ:

Օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետի համաձայն՝ գնումների բողոքարկման խորհուրդն իրավունք ունի որոշում կայացնելու մասնակցին գնումների

գործընթացին մասնակցության իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին:

Կարգի 125-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված՝ գնումների բողոքարկման խորհրդի ընդունած որոշման հիման վրա մասնակիցը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է 6 ամիս ժամկետով, եթե ավելի քան մեկ անգամ խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որի հետևանքով տուժանքի, հաշվարկված վնասի, տույժի կամ տուգանքի չափը չի գերազանցում գնումների բազային միավորը և մինչև բողոքարկման խորհրդի կողմից համապատասխան որոշում ընդունվելը՝ պատճառված վնասը, հաշվարկված տույժը կամ տուժանքը վերականգնվել է կամ եթե Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություններ կամ որակավորման չափանիշների, իսկ ապրանքների գնման դեպքում նաև տեխնիկական բնութագրերի գնահատման արդյունքում այդ որակավորման չափանիշները կամ տեխնիկական բնութագրերը որակվել են որպես մասնակցի կողմից ներկայացված հայտարարություններին չհամապատասխանող:

Ընկերությունները Ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացրած հայտի N 2 հավելվածով՝ Ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իրենց տվյալների համապատասխանության մասին հայտարարությամբ հայտնել և հավաստել են, որ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ (14.05.2015թ.) չունեն ժամկետանց հարկային պարտավորություններ Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարերի գծով:

Ի պատասխան Կենտրոնի 09.10.2015թ. թիվ 01/04.1/2704-15 գրության՝ ՀՀ ֆինանսների նախարարության 19.10.2015թ. թիվ 1.2/73-1/31013-15 գրությամբ ներկայացված ՀՀ ֆինանսների նախարարության Նոր Նորքի հարկային տեսչության 15.10.2015թ. թիվ 30-2/[950991]-15 գրության համաձայն՝ «Վա-Հա» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունեցել է 3748 ՀՀ

դրամ ժամկետանց հարկային պարտավորություններ, իսկ ՀՀ ֆինանսների նախարարության Վանաձորի տարածքային հարկային տեսչության 14.10.2015թ. թիվ 65-4/[950421]-15 գրության համաձայն՝ «Սապենո» Տպագրատուն ՍՊԸ-ի ժամկետանց հարկային պարտավորությունները հայտը ներկայացնելու օրվա դրությամբ (**14.05.2015թ.**) կազմել են՝ 210589 ՀՀ դրամ:

Սակայն, ի պատասխան Կենտրոնի 07.12.2015թ. թիվ 01/04.1/[2910]-15 գրության՝ ՀՀ ֆինանսների նախարարությունը 11.12.2015թ. թիվ 1/73-1/39653-15 գրությամբ ներկայացրել է ՀՀ ֆինանսների նախարարության Նոր Նորքի հարկային տեսչության 08.12.2015թ. թիվ 30-2/[995147]-15 գրությունը, համաձայն որի՝ «Վա-Հա» ՍՊԸ-ն 14.05.2015թ. դրությամբ չունի ժամկետանց հարկային պարտավորություն, միաժամանակ տեղեկացնելով, որ վերջինիս կողմից 25.11.2015թ. էլեկտրոնային եղանակով հարկային մարմին է ուղարկվել 2015թ. առաջին եռամսյակի շրջանառության հարկի և 2015թ. հունվար ամսվա եկամտային հարկի ճշտված հաշվարկներ, ինչի արդյունքում կատարվել է «Վա-Հա» ՍՊԸ-ի հարկային պարտավորությունների վերահաշվարկ:

Այսպիսով, **«Վա-Հա» ՍՊԸ-ն**, ըստ Նոր Նորքի հարկային տեսչության 08.12.2015թ. թիվ 30-2/[995147]-15 գրության, **2015թ. մայիսի 14-ի դրությամբ չի ունեցել ժամկետանց հարկային պարտավորություններ:**

«Սապենո» Տպագրատուն ՍՊԸ-ն, ըստ ՀՀ ֆինանսների նախարարության Վանաձորի տարածքային հարկային տեսչության 14.10.2015թ. թիվ 65-4/[950421]-15 գրության, **2015թ. մայիսի 14-ի դրությամբ** ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություններ՝ 210589 ՀՀ դրամի չափով:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում ենք ՀՀ ֆինանսների նախարարության թիվ 1/73-1/16391-15 գրությամբ Ընկերություններին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքը բավարարել մասնակի՝ «Սապենո» Տպագրատուն ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 06948558) ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կայացվելու օրվանից հաշված մեկ տարվա ընթացքում «Սապենո» Տպագրատուն ՍՊԸ-ի կողմից գնումների գործընթացին մասնակցելու հայտ ներկայացնելու դեպքում, այդ պահից հաշված 6 ամիս ժամկետով, իսկ «Վա-Հա» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ՝ 00813815) մասով բողոքը մերժել:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

Պետի տեղակալ՝



Հ. Այունց

Գնումների աջակցման և իրավական
խորհրդատվության վարչության պետ՝



Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և ահազանգման
բաժնի վարիչ՝



Մ. Կատվալյան

Գնումների բողոքարկման և
ահազանգման բաժնի առաջատար
մասնագետ՝ ՍՑ-ԳԲԽ-28/15 բողոքը
քննող հանձնաժողովի քարտուղար՝



Մ. Մանուկյան